նա, եթէ երկար այնտեղ կմնա...: Երեսին գոյն չես տեսնի, օրինակ քեզ՝ կտաւ... Ախ, Սուսանը էլ շատ չի ապրի, թէ «նրա» գլխին փորձանք կգա...

Պառաւը այլեւս չկարողացաւ խօսքը շարունակել, սկսեց դառն կերպով լաց լինել: Արտասուքը աւելի նսեմացրեց նրա աչքերի լոյսը: Ես աշխատեցի մխիթարել նրան: Երբ մի փոքր հանգստացաւ, հարցրի, ինձ բաւական մօտեցած համարելով գաղտնիքի իսկութեանը.

— Ինչպէ՞ս դու մտար «նրա» մօտ:

— Ինչպէ՞ս մտար... — կրկնեց պառաւը հեգնական կերպով եւ նրա ցամաք դէմքի վրայ վազեց մի վայրենի ծիծաղ: — Սուսանի ճանապարհը ո՞վ կարող է կտրել: Սուսանը ամէն տեղ մուտք ունի: Թէ խանի ամրոցի, թէ աղքատի խրճիթի դռները նրա առջեւ բաց են: Սուսանը կարդում է մարդերի ճակատագիրը. Սուսանը գուշակում է նրանց չան ու բարին: — Տու՛ր ինձ ձեռքդ, գուշակեմ քեզ համար...

Կարծես նա մոռացաւ առաջին տխուր զգացմունքը «խեղճ աղջկաէ մասին. կարծես, նա մոռացաւ, որ Կարօյի հետ էր խօսում: Այժմ տիրեց նրան այն, ինչ որ բոշայական էր, ինչ որ վայրենի էր: Նրա առաջին արտասուքը եւ վերջին ծիծաղը մի րոպէում այնպէս փոփոխակի կերպով յաջորդեցին միմեանց, որ պարզ երեւաց, թէ ողորմելի կինը ցնորուած էր:

— Լաւ, այդ յետոյ, թող մնայ գուշակելը, — պատասխանեցի ես: — Դու այն ասա՛, թէ ե՞րբ տեսար «նրան»:

— Սուսանը մտաւ ամրոցը, երբ առաւօտեան ցօղը դեռ չէր բարձրացել խոտերից. աղախինները վազեցին նրա առջեւը, «եկ, մեզ համար գուշակի՛ր, Սուսան», ասեցին. յետոյ տարան...

Պառաւը չաւարտեց իր խօսքը: Սոյն միջոցին մինարեթի դռնից երեւաց Կարօյի գիշերային անքնութիւնից գունաթափուած դէմքը: Պառաւը մի խոժոռ հայեացք գցելով իմ վրայ, իսկոյն թողեց ինձ, ասելով.

— Դու Կարօն չես. դու խաբեցի՛ր Սուսանին...

Նրա խռովեալ ձայնի մէջ կար ե՛ւ սպառնալիք, ե՛ւ բարկութիւն:

— Միեւնոյն է, նա իմ եղբայրն է, Սուսան, — հանգստացրեց Կարօն, մօտենալով պառաւին:

Նրանք առանձնացան մի կիսաւէր պատի ետեւի կողմը, եւ երկար կանգնած խօսում էին ինձ անլսելի ձայնով: Պատի վրայ բուսած մացառների խտութիւնը դեռ չէր արգելում նրանց իմ տեսութիւնից: Կարօն գլուխը քարշ գցած, լսում էր: Պառաւը ինչ որ պատմում էր նրան: Ես այժմ մասամբ հաս-